

և Հայ իշխանական հակահոսանքը անոր դէմ անմիջապէս կը ցցուէր իր իրաւանց սահմանները ցոյց տալով, որպէսզի կուշ չերթար քիւրդ հորաւայականութեան:

Այդպէս էր որ, Մանօղլին կը համարէր իրեն Մամիկոն-եաններու սերունդ՝ որու պապերը Մուշէն եկած էին(*), հետեւապէս իշխանական ծագումով՝ Քիւրդերէ աւելի իրաւասու նոյնպէս իր ընկերները Չալկատըր և այլն, որոնց ամեն մէկն ունէր իր քաղաքական պատճառարանութիւնը:

Որովհետեւ արդէն Պէտիր-խանը զօրացած էր, և իր զօրութիւն մի մասը բնական էր որ վնասէր հայ իշխաններու համաձայնութիւնը ձեռք բերելուն մէջ, և հայ իշխանները չի գլխոցուիլ կամայ թէ ակամայ, համաձայնութեան եկած էին Պէտիր-խան պէյի հետ, դուցէ սպասելով վերջին առիթներուն: Պատմական փաստերը համեմատութեան զնելու համար աւանդութեան հետ, առաջ կը բերենք այս պարզապէս՝ ինչպէս խօսուած է:

Պէտիր-խան պէյը իր ծրագիրը դրած էր պարզ և պարտաւորիչ:

Իր իշխանութեան խիտ ծաւալը պիտի ամփոփէր իր մէջ, Վան, Պիթլիս, Մուշ, Տիարպէքիր՝ մինչև Ուրմիոյ շրջանը:

Արտաքին պաշտպանութիւնը ձեռք բերելու համար՝ իր և Քիւրդերու ինկած բաժինը՝ որոշած էր որոնել Պարսից պաշտպանութիւնը: Հայերու բաժինը՝ խնդրել տալ Ռուսաց ու Վրացիներու օգնութիւնը:

Տիրապետուած երկրին իշխանը պիտի լինէր ինքը Պէտիր-խան պիյը: Իսկ ազոր փոխարէն՝ իշխանը Հայերուն պիտի տար կառավարութեան տնտեսական բաժնի մատակարարութիւնը:

Իշխանութեան զինուորական մասը պիտի կազմուէր հայերէ բրդերէ խառն ինչպէս էր արդէն: Ցեղերու մերձեցումը առաջ բերելու համար դիմած էր ձուլումի փաղափակաճութեանը՝

(*) Մանօղլին իր հօր կողմէն զրկուած է Կ. Պոլիս՝ ու իր ուսումը ստացած լինելով իտալական դպրոցի մէջ՝ վերադարձեր է Վան և մասնակցել ժամանակակից այդ գործողութիւններուն: